


Ի՞նչ է թափօրը:

Ս. Պատարագի սկիզբը, պատարագիչ եկեղեցականը խորան բարձրանալէ ետք վարագոյրը կը գոցուի: Վարագոյրին ետին կը պատրաստէ Ս. Պատարագի սկիհը՝ նշխարն ու գինին: Վարագոյրը բացուելով՝ պատարագիչը խորանէն վար կ'իջնէ խաչ ու բուրվառ ձեռքին եւ դպիրներ՝ խումբով առջեւէն շարական երգելով ժողովուրդին մէջ կը դառնան: Այս կը կոչուի թափօր:

Թափօրը կը խորհրդանշէ Յիսուս Քրիստոսի աշխարհ գալը եւ ժողովուրդին մէջ շրջիլն ու քարոզելը:

Երբ պատարագիչը թափօր կը դառնայ, հաւատացեալները պարզ դիտողներ պէտք չէ մնան: Այսօր ընդհանրացած երեւոյթ դարձած է թափօրի ատեն տեսնել հաւատացեալները, որոնք անտարբերութեամբ կը հետեւին եկեղեցւոյ մէջ դարձող պատարագիչին: Անոնք, որոնք մօտ են պատարագիչին, բարեպաշտական մղումէ մեկնած կը մօտենան անոր ձեռքի խաչը համբուրելու, ոմանք քաղաքավարութիւն կը զգան խաչը համբուրել, ուրիշներ պատարագիչին հաճելի թուելու համար կը համբուրեն, ուրիշներ կը զգան թէ պարտաւոր են համբուրելու, եւ ինչքան զգալի կ'ըլլայ խաչը համբուրելու մեքենական շարժումները: Իսկ անոնք որոնք պատարագիչէն հեռու են, ի՞նչ կ'ընեն: Անոնք ըսելիք չունին:

Պատարագիչը երբ ժողովուրդին մէջ թափօր կը դառնայ, հաւատացեալները պէտք է մեղմ ձայնով ըսեն. «Յիշեսցի՛ր եւ զմեզ առաջի անմահ զառիւն Աստուծոյ», այսինքն՝ «Մեզ ալ յիշէ Աստուծոյ զառիւն (Քրիստոսի) առջեւ:



ԺԱՄԱԳԻՐ

Գիրք մը, որ կը պարունակէ ժամերգութեանց կարգաւորութիւնները, ի բաց առեալ պատշաճի շարականներն ու ընթերցուածները, նաեւ կը պարունակէ մաղթանքները, քարոզները, աղօթքները, փոխերն ու երգերը: Ժամերգութեան կազմութեան վրայ պիտի չխօսինք հարկաւ: Ժամագիրքերը երկու տեսակ են. մէկը՝ **ՁԵՌԱՅ ԺԱՄԱԳԻՐՔ**, փոքր ու թածալ եւ լոկ ժամագիրքը պարունակող ըստ յիշեալ բացատրութեան, միւսը՝ **ԱՏԵՆԻ ԺԱՄԱԳԻՐՔ**, մեծադիր, մեծ քառածալ, որուն սկիզբը կայ ամբողջ Սաղմոսը, վերջը՝ Տօնացոյցը եւ մէջտեղը՝ բուն ժամագիրքը: **ԱՏԵՆԻ** ժամագիրքը բեմին մէջտեղը կը դրուի փոքր գրակալին վրայ եւ անոր վրայէն կը կարդայ քահանան՝ աղօթքները, սարկաւազը՝ քարոզները եւ դպիրները՝ փոխերը: **ՁԵՌԱՅ** ժամագիրքը բոլոր պաշտօնեաներու ձեռքը կրնայ գտնուիլ դասուն մէջ: Դասերուն գրակալին վրայ ալ անհրաժեշտաբար Շարականէն գատ ժամագիրք մըն ալ պիտի գտնուի՝ Ատենի կամ Ձեռաց, անոր վրայէն երգերը, կանոնադրութիւններն ու ալիլուհաները կարդալու համար:

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ jcrak Ծրագ քերթ



ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ
Երգ. 1.1-2.3: Ձք. 9.9-15: Փլպ. 4.4-7:
ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 20.29-21.17

ԾԱՂԿԱԶԱՐԴ

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ
20.29- 21.13

Յիսուս իր աշակերտներէն երկուքը դրկեց՝ անոնց պատուիրելով. «Գացէք սա դիմացի գիւղը եւ անմիջապէս հոն կապուած էշ մը պիտի գտնէք իր աւանակին հետ. քակեցէք եւ ինծի բերէք: Եթէ մէկը առարկէ, ըսէք. ”Տէրը անոնց պէտք ունի”, եւ անմիջապէս թոյլ պիտի տայ ձեզի»: Ասիկա պատահեցաւ, որպէսզի իրականանայ մարգարէին խօսքը. «Երուսաղէմի ըսէք. Ահա քու թագաւորդ քեզի կու գայ. Անիկա հեզ է, նստած իշու մը աւանակին վրայ»:

Աշակերտները գացին եւ կատարեցին, ինչ որ Յիսուս պատուիրեց իրենց: Բերին էշն ու աւանակը եւ իրենց հագուստները անոնց վրայ դրին: Ապա Յիսուս նստաւ աւանակին վրայ: Ժողովուրդէն շատեր իրենց հագուստները կը փռէին ճամբուն վրայ, ուրիշներ ծառերէն ոստեր կը կտրէին եւ կը տարածէին ճամբուն վրայ եւ ամբողջ բազմութիւնը, որ թափօրին մէջ Յիսուսի առջեւէն կ'երթար կամ կը հետեւէր իրեն, կ'աղաղակէր. «Օրհնութիւն Դաւիթի որդիին, օրհնեալ է ան, որ կու գայ Տիրոջ անունով: Օրհնութիւն Բարձրեալին»:

Երբ Յիսուս Երուսաղէմ մտաւ, ամբողջ քաղաքը դողդեցաւ: «Ո՞վ է ասիկա», կը հարցնէին քաղաքի բնակիչները եւ ամբոխը կը պատասխանէր. «Ասիկա Յիսուս մարգարէն է, Գալիլիայի Նազարէթ քաղաքէն»:

Ապա Յիսուս տաճար մտաւ եւ դուրս վռնտեց բոլոր անոնք, որոնք տաճարին մէջ առ ու ծախ կ'ընէին: Լուսնայափոխներուն սեղանները եւ աղանձվաճառներուն աթոռները շրջեց եւ ըսաւ անոնց. «Սուրբ Գիրքերուն մէջ գրուած է. ”Իմ տունս աղօթքի տուն պիտի կոչուի”, մինչ դուք զայն աւազակներու որջի վերածած էք»:

ԾԱՂԿԱԶԱՐԴ

Մեծ պահոց վերջին Կիրակին կը կոչուի՝ Ծաղկագարդ: Ծաղկագարդի Կիրակի օրուան աւետարանը կը բովանդակէ Քրիստոսի կեանքի հետ կապուած շարք մը դէպքեր՝ Ղազարոսի յարութիւնը, Իր հանդիսաւոր մուտքը Երուսաղէմ, ժողովրդական խանդավառ ընդունելութիւնը «Ովսաննա՛, օրհնութիւն ի բարձունս, օրհնեալ որ գաս յանուն Տեառն» եւ Տանարի մաքրութիւնը:

Յիսուս հանդիսաւոր կերպով, աւանակի վրայ նստած, մուտք կը գործէ Երուսաղէմ: Ժողովուրդը խանդավառ ընդունելութիւն ցոյց կու տայ ձիթեմիի եւ արմաւենիի ոստեր առած եւ զգեստները քանապարհին վրայ փրճած, որպէսզի անոնց վրայէն անցնի, եւ կ'աղաղակէ. « Ովսաննա՛, օրհնութիւն անոր, որ կու գայ Տիրոջ անունով»: Իսկ Յիսուս, փառքի մէջ անայլայլ եւ անտարբեր, կը մտնէ տանար եւ այնտեղ խարազանով կը մաքրէ տանարը՝ լուծալափոխ եւ աղանաւաճառ մարդոցմէ, ժողովուրդին հասկցնելու համար, որ տանարը Աստուծոյ տունն է եւ պիտի ըլլայ միայն աղօթքի տուն:

Այս է Ծաղկագարդի Կիրակիի աւետարանական իմաստը:

Ծաղկագարդի Կիրակին, եկեղեցիները կը զարդարուին արմաւենիի եւ զիւրիկով եւ ձիթեմիի ոստերով, աւելի իմաստալից եւ պատկերալից դարձնելու համար Յիսուսի Երուսաղէմ մուտքը:

Ծաղկագարդը պիտակաբար կը կոչուի նաեւ Գալուստ, իբրեւ մեսիաքար գալուստը Փրկչին յերուսաղէմ եւ ի չարչարանս:

Այս պատմառաւ, անոր կը կցուի նաեւ Քրիստոսի երկրորդ կամ վերջին գալստեան յիշատակը, որ կը կատարուի երեկոյի արարողութեան միջոցին, «Դոնքացէ՛ք» խորհրդաւոր արարողութեամբ, ի պատկեր վերջին դատաստանի եւ աստուածային արդարութեան:

Եկեղեցւոյ հայրերու ուսուցումներուն համաձայն, Յիսուսի առջեւ հանդերձներ նետելը կը խորհրդանշէ մեղքէն ազատուիլը: Ոստեր եւ ճիւղեր ընծայելը առանձնակի պատիւներ եւ հանդիսաւորութիւն կը խորհրդանշէ: Ձիթեմի կը համարուի իմաստութեան, խաղաղութեան, յաղթանակի եւ փառքի խորհրդանշան: Ձիթեմիի եւ արմաւենիի ճիւղերու ընծայումը Քրիստոսի՝ որ մեռեալ Ղազարոսին յարութիւն տուաւ, կը խորհրդանշէ մահուան հանդէպ յաղթանակ:

Ծաղկագարդի նախօրեակին՝ Շաբաթ օրը, կը կատարուի Ծաղկագարդի նախատօնակը, կը բացուի եկեղեցւոյ վարագոյրը, իսկ յաջորդ օրը ժամերգութենէն ետք, բաց վարագոյրով կը մատուցուի Ս. Պատարագ: Ծաղկագարդի առաւօտեան կ'օրհնուին ձիթեմիի կամ ուռեմիի ոստեր եւ կը բաժնուի ժողովուրդին:

Յիսուս Քրիստոս որպէս թագաւոր՝ յաղթական պսակ գլխուն, անէծքը վերցնող եւ կենդանութիւն պարգեւող է:

Ծաղկագարդի օրը եկեղեցւոյ մէջ նաեւ կը կատարուի մանուկներու օրհնութեան կարգը:

ՀՈԳԵՒՈՐ ՊՍՏԳԱՍ

ՄԵՐ ԿԵԱՆՔԻ ԵՊՍՏԱԿԸ ՄԵՐ ԵՐԿՆԱՒՈՐ ՀՕՐ ԿԱՄՔԻՆ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՊԷՏՔ Է ԸԼԼԱՅ

«Հայր, եթէ ուզես՝ այս բաժակը հեռացուր ինձմէ. բայց ոչ թէ իմ կամքս, այլ քու կամքդ թող ըլլայ» (Ղկ. 22.42): Յիսուսի այս աղօթքը տառապանքի բաժակը չխմելու աղօթք մը չէ, այլապէս ան ինքզինքին հակասած պիտի ըլլար, որովհետեւ առիթով մը ըսաւ. «Բայց հիմա 51 հոգիս խոտոված է. եւ ինչ ըսեմ: Ըսե՛մ՝ "Հա՛յր, ազատէ զիս այս ժամէն": Բայց տառապանքի այս ժամուն համար եկած եմ արդէն» (Յհ. 12.27): Ձերբակալութեան պահուն խօսքը ուղղելով Պետրոս առաքեալին՝ ըսաւ. «Սուրդ իր պատեանը դիր. տառապանքի բաժակը, որ Հայրս տուաւ ինձի, պիտի չխմե՛մ կը կարծես» (Յհ. 18.10-11): Յիսուս, քու կամքդ թող ըլլայ խօսքով ցոյց տուաւ մեզի, որ ինք մեր երկնաւոր Հօրը կամքին կատարումն է, որ կը հետապնդէ ամէն բանէ առաջ:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔ ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ

Աղօթքի ընթացքին մեկդի թողունք մեր սեփական կամքն ու փափաքը, եւ խնդրենք Աստուծմէ, որ իր կամքը կատարուի մեր կեանքերուն մէջ:

Մաքրենք մեր հոգիները քիւնախնդութենէն, եւ հսկենք՝ աղօթենք Անոր, ծոմապահութեամբ եւ ժուժկալութեամբ, որպէսզի արժանի ըլլանք խոստացուած բարիքներուն, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսով:
Բ. Մաշկետորցի

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒԶԵՍ...

ԵԹԷ Կ՛ՈՒԶԵՍ ԳԻՏԱԿԸ, ԹԷ Ի՛ՆՉ ԴԱՏԱՍԱԾՆ ԿԸ ՍՊԱՍԷ ՄԵՂԱՎՈՐՆԵՐՈՒՄ, ԼՅՈՐԷՆՆԵՐՈՒՄ ԵՒ ՉԿՐԵՐՈՒՄ, Կարդա՛ր ՍԱԿՄՈՍ 11

Ես ՏԻՐՈՉ ապաւինեցայ: Ի՞նչ պէս ինձի կ'սէք. «Թռչունի պէս լեռ փախիր»: Որովհետեւ, ահա ամբարիշտները իրենց աղեղը կազմեցին եւ իրենց նետը լարին վրայ ամբացուցին, խաւարին մէջ հարուածելու համար սրտով ուղիղ մարդիկը: Եթէ մարդկային ընկերութեան հիմերը կործանած են, արդարը ի՞նչ կրնայ ընել:

ՏԵՐԸ իր սուրբ տաճարին մէջ է: ՏԻՐՈՉ աթոռը երկինքի մէջ է: Անիկա աչքէ չի հեռացներ տառապողները իր ակնարկով կը կշռէ մարդիկը: ՏԵՐԸ կը քննէ արդարն ու ամբարիշտը, եւ կ'ատէ բռնութիւն սիրողը:

Անիկա ամբարիշտներուն վրայ կրակ ու ծծումբ պիտի տեղացնէ, եւ այրող խորշակը պիտի ըլլայ անոնց վերապահուած բաժինը, որովհետեւ ՏԵՐԸ արդար է, կը սիրէ արդար գործերը, եւ ուղիղ վարքով ապրող մարդիկը զայն երես առ երես պիտի տեսնեն:

ԱՂՕԹՔ

Վայ ինձի, Տէր, որովհետեւ տառակուսանքի ծփանքը կը պատէ զիս եւ կ'ալեկոծէ սիրտս: Չեմ գիտեր, թէ ինչ աղօթեմ: կը սաղմոսեմ եւ չեմ հասկընար, շրթներս լոկ կը բառբառեն, իսկ միտքս ճողորմելով հոս ու հոն կը թափառի: Չ'ենթարկուիր կամքիս ու չի հանդարտիր, աներեւոյթ կը շրջի եւ անորսալի կը մնայ: Կը չարչարուիմ ու չեմ օգտուիր: Պղինձի ու ծնծղայի ձայնի պէս թափուր եւ ունայն կը համարուիմ եւ անպտուղ կը մնամ բոլոր բարիքներէն:
Եփրեմ Ասորի